ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դեկտեմբերի 2021 թվականի № Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի №475Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանելու մասին» №379Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանվել է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման վերջնաժամկետ՝ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, որը «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմումների հիման վրա մի քանի անգամ երկարաձգվել է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը ներառյալ,

բ) Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը նախազգուշացնելու մասին» №475Ա որոշմամբ Ընկերությունը նախազգուշացվել է Որոշմամբ ամրագրված պահանջի խախտման համար և պարտավորեցվել է որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում բաժանորդների հետ կնքել խմելու ջրի մատակարարման, և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերը,

գ) Ընկերությունը սույն թվականի նոյեմբերի 19-ի №ՄՇ/36365 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացի սահմանված վերջնաժամկետը երկարաձգելու առաջարկ՝ պարզաբանելով, որ 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ պայմանագրեր են կնքվել թվով 565090 բաժանորդների հետ, որը կազմում է տվյալների բազայում գրանցված ակտիվ 644782 բաժանորդների շուրջ 87,6 տոկոսը, և որ պայմանագրերի

կնքումը սահմանված ժամկետում ավարտելու համար խոչընդոտ են հանդիսանում սեփականատերերի բացակայությունը և ընտանիքի անդամների կամ հասցեում բնակվող այլ անձանց մոտ համապատասխան լիազորություն չունենալը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի բացակայությունը,

դ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №379Ն որոշմամբ սահմանման պահից ի վեր խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման ժամկետը մի քանի անգամ երկարաձգվել է մեկական տարով, և Ընկերությունը մինչ օրս չի ավարտել բոլոր բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը, Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում պայմանագրերի կնքման վերջնաժամկետը երկարաձգել վեց ամիս ժամկետով, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետում «մեկ տարվա ընթացքում» բառերը փոխարինել «մեկ տարի վեց ամսվա ընթացքում» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
դեկտեմբերի 2021թ.